# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի  Մ Ա Ր Զ Պ Ե Տ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<24>> ----------07---------------2025թ.  N ՄՈ/730 -Ա

ք. Արմավիր

### ՎԱՐԴԻԹԵՐ ՎԱՐԴԵՐԵՍՅԱՆԻՆ «ԱԿՆԱԼԾԻ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասով, հիմք ընդունելով «Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հետ 2020 թվականի հուլիսի 23-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4.1 կետի «ա» ենթակետը, պաշտոնավարման ժամկետը լրանալու կապակցությամբ.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. Վարդիթեր Վարդերեսյանին 2025 թվականի հուլիսի 24-ից ազատել «Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից, լուծելով նրա հետ 2020 թվականի հուլիսի 23-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:
2. «Ակնալճի Ա. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահին՝ իրականացնել վերջնահաշվարկ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,**
**ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝**

Ստորագրող
ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
2808860099
2025-07-24 16:19:50 GMT+4

**ԲԱՐՍԵՂ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ**